

ՕԳՈՍՏՈՍ 19, ԴԵԿՏԵՄԲԵՐ 31, 1967

Սիրելի Մխականներ,

Տեղեկագիրը կը սկսիմ Առաջնորդ Սրբազան Հօր Օգոստոս 11, 1967 թուականի նամակին ընթերցումով:

Արժանաշնորհ,

Տ Վարդան ԲՆՆՅ. Տ Ասատուրեան
Հոգեհոր հովիւ Ս Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվր հիւ:

Սիրելի Տ Վարդան,

Ստացած ենք 9 Օգոստոս 1967 թուականի Ձեր նամակը, եւ Ձեր ներկայացած օրինակը նիւ-Պրիթընի Սբ. Յարութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ Մխական Խորհուրդին մեզի ուղղած Օգոստոս 4, 1967 թուականի տեղեկատուութեան ի մասին Ձեզի հետ ունեցած իրենց հասկցողութեան, ստանձնելու համար նոյն համայնքին հովուական պատասխանատուութիւնը:
Գոհ ենք կատարուած կարգադրութեան մասին: Կը ներկայենք օրինակը մեր նամակին, ուղղուած նիւ-Պրիթընի Սբ. Յարութիւն Եկեղեցւոյ Մխական Խորհուրդին: Կը մաղթենք Ձեզի կորով, ստանձնելու համար այս նոր պարտականութիւնը նիւ-Պրիթընի մեր համայնքին բարգաւաճ գործունէութեան ի խնդիր:

Սիրոյ ողջունիւ
Թորգոմ Եպիսկոպոս
Առաջնորդ

Նիւ-Պրիթընի Սբ. Յարութիւն եկեղեցւոյ Մխական Խորհուրդին հետ եղած կարգադրութեան համաձայն իբրեւ այցելու հովիւ պաշտօնի ձեռնարկեցի Օգոստոս 19, 1967ին: Հինգ ամսուան ընթացքին ունեցած գործունէութեանս ամփոփ պատկերը հետեւեալն է: - Կատարուած համաձայնութեան համեմատ շաբաթը երեք օր այս ծուխին հետ եղած եմ: Եւրաթ կէսօրէ ետք հոս հասնելով ժամը 3-5 եկեղեցւոյ գրասենեակին մէջ աշխատած եմ: Իսկ յաջորդ օրը, Կիրակին, կատարած ենք եկեղեցական պաշտամունք, մատուցած Ս Պատարագ եւ խօսած աւուր պատշաճի քարոզ հայերէն ու անգլերէն լեզուներով, ի մխիթարութիւն մեր հաւատացեալ ժողովուրդեան: Կիրակիները հիւրասիրուած եմ մեր ծխականներուն կողմէ: Երկուշաբթի օրերը ժամը 11-12 եկեղեցւոյ գրասենեակը գտնուած եմ եկեղեցական գործերով ձեռնարկելու համար: Կէսօրէ ետք ժամը 2-30 -4-45 հայկական դպրոցին մէջ մեր փոքրիկներուն հայերէն դասաւանդած եմ: Հոս գտնուած երեք օրերունուայ եմ Սի էյ բնակած եմ: Ուրախ եմ ըսելու որ ծխականատարութեան սկսած ենք պսակի օրհնութեամբ: Պայմաններուս ներած չափով այցելած եմ հիւանդներուն, սգաւորներուն եւ զանազան ազգայիններուն:

Հոս կուզեմ յիշել որ ամէն շաբաթ ատենին նիւ-Պրիթըն հասնելով որեւէ անկանոնութեան տեղի տրուած չէ:
Եզրափակելով խօսքս, հաճոյքով կ'ըսեմ թէ Ձեր զոհողութեան եւ համագործակցութեան շնորհիւ շէն ու պայծառ է այսօր Սբ. Յարութիւն եկեղեցին: Երբ Յունիսի վերջերը կամ Յուլիսի սկիզբները ընտանիքով հոս հաստատուինք այն ատեն կը սկսիմ բոլոր ուժս ու ժամանակս տրամադրել համայնքիս զօրացման եւ բարգաւաճման:

Աստուած օրհնէ մեր ազնիւ ու բարի ժողովուրդը:
Շնորհակալութիւն ներկաներուդ որ Ձեր մասնակցութիւնը բերիք այս ժողովին եւ Ձեր շինիչ թելադրութիւններով օգտակար հանդիսացաք:

Armen Papadonichian
Վարդան ԲՆՆՅ. Տ Ասատուրեան